«ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՊԱՍՏԱԿԻՆ» ՎԵՐԱԲԵՐՈՂ ԺԱ. ԴԱՐԻ ՎՐԱՑԵՐԷՆ ՄԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Պարոյր Մուրադեան

Նուիրում եմ «մանր արուեստների» մեծ գիտակ.
պրոֆ. Տիգրան ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ 70-ամեակին

Հայագէտները Հ. Վարդան Հացունու, Յ. Քիւրտեանի, Յ. Մանանդեանի, Վ. Աբրահամեանի, Բ. Առաքելեանի աշխատութիւններում իրար լրացնող վկայակոչումներով ու մեկնաբանութիւններով հետազօտուած են միջնադարեան Հայաստանի արհեստներն ու արհեստաւորութիւնը, մասնաւորապէս նաեւ ոստայնանկութիւնն ու ազգակից արհեստները՝ կտաւագործութիւն, անկուագործութիւն, ասուագործութիւն, գորգագործութիւն եւ այլն[1]: Նրանցում թուարկուում ու ներկայացուում են Արեւելքի ու Արեւմուտքի այն երկրները, ուր արտահանուում էր Հայաստանում ստեղծուած գործուածքեղէնը: Բնական էր ենթադրել, թէ քաղաքական ու աշխարհագրական մերձութեան, ինչպէս նաեւ համաբնակ գաւառների ու քաղաքների առկայութեան պարագաներում հայոց այդ կարգի արտադրութիւնները ճանաչուում պիտի ունենային նաեւ Հարեւան Վրաստանում: Սակայն գրականութեան մէջ այդ մասին գրեթէ չի խօսուում, որովհետեւ բացակայում են ուղղակի ցուցում բովանդակող աղբիւրները:

Ռաճայի Նիկործմիդայի (ս. Նիկողայոս) տաճարի կալուածագրերի եւ այլ վաւերագրերի մէջ վրաց անուանի պատմաբան-աղբիւրագէտ Թ. Ժորդանիան գտել եւ 1897 թ. լոյս տեսած «Քրոնիկներ եւ այլ նիւթեր Վրաստանի պատմութեան եւ դպրութեան» ժողովածուի 2-րդ հատորում (էջ 43-49) հրատարակել է ԺԱ. դարի 80-ական թուականների գրուած, սկզբից եւ վերջից պակասաւոր մագաղաթեայ մի վաւերագիր, որ այսօր վրացագիտութեան մէջ յայտնի է, «Գիր ս. Նիկողայոս [տաճարի] առաջնորդի» անունով: Այն բովանդակում է հոգեւոր կենտրոնի առաջնորդի կողմից կատարուած գնումների եւ ստացած նուիրատուութիւնների մի ընդարձակ ցանկ (30 անուն), որը կարեւոր աղբիւր է միջնադարեան տնտեսական ու մշակութային պատմութեան համար: Վաւերագիրն ուշեցել է մի քանի հրատարակութիւն, որոնց մէջ առաւել կարեւոր են Թ. Ժորդանիայի՝ բնագրի վրայից վերծանած ու ծանօթագրած հրապարակումը[2] եւ վերջին տարիներին վաւերագրերի գիտական-ակադեմիական դիւանի առաջին հատորում ընդգրկուած հրատարակութիւնը[3] ըստ Ս. Կակաբաձէի պահպանուած ընդօրինակութեան, հրապարակումներում առկայ տարընթերցումների վկայակոչութեամբ (խմբագիրը այժմ կորած է համարւում):

Վաւերագրի սկզբում յիշատակւում են նուէրներն ու նուիրատուները: Վերջիններիս մէջ կան հայագէտի համար ընտանի անձնանուններ՝ Շուշան, Նուշ, Վարազ-Վաչէ, բոլորն էլ, ինչպէս երեւում է՝ ԺԱ. դարի անձինք: Առաւել ընդարձակ՝ երկրորդ բաժինը վերաբերում առաջնորդի գնած գեղջուկներին եւ հողերին եւ նրանց դիմաց եկեղեցուց կատարուած վճարումներին: Այստեղ հէնց առաջին թուարկման մէջ կայ հայագիտութեան համար կարեւոր նկատուող մի առարկայի յիշատակութիւն.

ՄէՏԷԽԱՐԱՍ ԴԷԲՈՐԱՆՈՅ ԺՈՒՂՈՎ ԳԼԷԽՈ Ա, ԴԱ ՄՈՒՏՅՈՑ ՄՈՅՑՑ ԺՈՒԼՈՈ ԱԽԱԼՈ ԵՐՏՈ ԴԱ ՇՈՂԳՈ ԺՈՒԼՈՈ **Ա, ՖԱԲԱՍՏԱՈ Բ,** ՋԱՋՃՈՒ Ա ԴԱ ԽԱՐՈ ԿԱՐԳՈ Ա, ՍԱՍԹՈՒԱԼՈ ԽՈՐԱՈՏԱ ԿԱՐԳՈ Ա, ԴԱ ՔԱՓՈ ՋԱՋՃՈՒՍԱՈ Ա, ԴԱ ՄՈՓԱՄԷ ԱՐՈԱՆ ԿԱՑՆՈ[4]:

Թարգմ. «Մետեխարայում Դեբորիանի որդուց գնեցի մէկ գեղջուկ եւ նրա համար տուեցի մէկ նոր գորգ եւ մէկ կարպետ, հայկական երկու տաբաստա, շղթայ՝ մէկ, լաւ եզ՝ մէկ, թաղիքէ լաւ բարձ՝ մէկ, շղթայի շարան՝ մէկ: Եւ վկայ են մարդիկ»:

Ընդգծուած տաբաստա առարկան հայկական աղբիւրներում յայտնի է գերազանցապէս իր հնաւանդ ձեւով՝ տապաստակ, որ, ըստ Հր. Աճառեանի բացատրութեան, բազմոց, դիւան է նշանակում[5], մինչ Ստ. Մալխասեանցի բառարանում բառիս դիմաց գրուած է. սփռոց, գորգ, օթոց, որի վրայ նստում են ուտելու ժամանակ[6]: Տապաստակ եզրի առարկայական նշանակութեամբ մեզանում առաջինն զբաղուել է Հ. Վարդան Հացունին, որի համոզմամբ այն է «ազնիւ սփռոց (տապաստ արկանելիք) բազմականին վրայ ձգուած՝ նման հռովմէական ճոխ պաստառաց, որ նոյն պաշտօնը կը վարէին... Իսկ տապաստակաց վրայ կը դրուէին բարձերը»[7]: Նա քննութեան է առնում Փաւստոսի գործածած ակումբ տերմինը եւ եզրակացնում, որ այն «հոմանիշ է տապաստակին, բայց աւելի անշուք եւ նման բարձին, փոխաբերաբար կը նշանակէ հոն բազմոցն ինքնին կամ բազմոցն ալ միասին»[8]:

Գորգերին ու փռոցներին վերաբերող աշխատութեան մէջ Յ. Քիւրտեանը ստոյգ է համարում Հ. Վարդան Հացունու եզրակացութիւնը եւ աւելացնում. «Ըստ իս, տապաստակը գորգին, բազմականին վրայ սփռուած ճաշի կաշիէ սփռոցն իսկ է, որ գորգին վրայ կը դրուէր, որուն շուրջ կը բազմէին ճաշակիցները՝ նստելով բազմոցներու, բարձերու վրայ կամ ուղղակի գորգին վրայ, երբեմն կռնակնին տալով բարձի: ... Ես ալ համամիտ եմ Հ. Հացունիի, որ տապաստակ հոմանիշ է Փաւստոսի անգամ մը յիշած ակումբին կամ Ս. Գրոց մէջ յիշուած մաշկին (Յղթ. ԺԲ 15), որ սակայն հայ թարգմանիչէն հայացուած է ակումբն մաշկեայ ձեւով՝ պարզապէս ակնարկելով կաշիէ կլոր սփռոցին, որ գորգի սեղանին վրայ կը սփռէին հայք եւ իրենց դրացի ժողովուրդները ճաշի առեն»[9]:

Եթէ հետեւելու լինենք Ի. Աբուլաձէի «Հին վրացերէն լեզուի բառարանին», վաւերագրի ՖԱԲԱՍՏԱՈ-*ան կողմին պիտի թարգմանենք, ինչպէս այն գտնում ենք Թագաւորաց երկրորդ գրքում, (Բ. Թագ, ԺԷ, 28)*

ἤνεγκαν δέκα **κοίτας** καὶ αμφιταπους καὶ λέβητας δέκα καὶ σκεύη κεράμου καὶ πυρούς καὶ κριθὰς καὶ ἄλευρον καὶ ἄλφιτον, καὶ κύαμον καὶ φακὸν

Բերին անկողինս տասն եւ օթոցս եւ սանս տասն եւ անօթս բրտի, եւ ցորեան եւ գարի, եւ ալեւր եւ փոխինդ, եւ ոլոռ եւ ոսպն:

და მოართვეს ათი **ტაბასტო,** ათი ტერი, ათი ქვაბი სიავი და ათი კაცის ჭურჭელი, იფქლი და ქრთილის ფქვილი და ოსპი და ხნდური.

Κοίτη-*անկողին համապատասխանութիւն ունենք նաեւ այլ հատուածներում (Ծնն. ԽԹ 4, Ղեհ, ԺԵ 4, 5), մինչդեռ վրացերէնում (A-51 խմբ.) այլեւս* ტაბასტი *չէ, այլ՝* საწოლი, სარეცელი.

© National Library of Armenia

Մտուգաբանօրէն անկողին բառին աղերսուող վրաց. ლოგინი-ն տեղ, տեղի է նշանակում՝ (հմմտ. տեղաշոր, բարբ.՝ տեղ գցել, տեղը պառկել):

Եթէ վաւերագրում մասնաւորեցւում է, թէ գեղջուկի դիմաց տրուածը «հայկական երկու տաբաստո» է, ուրեմն նրա վրացերէնում ունեցած առարկայական իմաստն ու կիրառութիւնը այն պիտի լինի, ինչ հայկական աղբիւրների տապաստա-ն (տապաստ)-ն է:

Վաւերագրերի առաջին հրատարակիչ Թ. Ժորդանիան տերմիններին վերաբերող ծանօթագրութիւններում արդէն նկատել է, թէ՝ տաբաստա-ն կամ տաբաստանի-ն թանկագին կարմիր կտորեղէն է, որը փռում էին թագաւորների ոտքերի [տակ]»: Այստեղ նշուող կարմիրը, կարծում ենք, պարզ թիւրիմացութեան արդիւնք է, ինչպէս հայերէնում, նոյնպէս եւ վրացերէնում տաբաստ տերմինը ունի նաեւ բժշկական կիրառութիւն՝ մոլաքոր, ծաղիկ հիւանդութեան նշանակութեամբ, որ առկայ է նաեւ Ս.-Ս. Օրբելիանիի բառարանում «արիւնահոսութիւն» բացատրութեամբ[10], ուր եւ յղում է կատարում Թ. Ժորդանիան[11]:

Այսպիսով, անկախ կաշուէ կամ կտաւէ լինելուց, տապաստակ/տաբաստան գորգ էէ, այլ սփոռոց, օթոց, «որի վրայ նստում են ուտելու ժամանակ»[12] եւ յիրաւի այն գործածական էր նաեւ դրացի վրաց կենցաղում իբրեւ հարեւան Հայաստանից տարածում գտած գործածելիք: «Թագաւորի օծման կարգը» վրացական տեքստում մասնակիցներից առաւել պատուարժանները նստում էն "ნატოთა და ბალაშითა" զամշով (եղջերուենիով) եւ բարձով[13]: Ն. Մառը ნატი-ն թարգմանել է коврик (փոքր գորգ)[14]:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Հ. Վարդան Հացուցի, *Մաշեր եւ խնճոյք հին Հայաստանի մէջ*, Վենետիկ-Ս. Ղազար, 1912: Յ. Քիւրտեան, *Գորգը հայոց մօտ*, Վենետիկ-Ս. Ղազար, 1947, Я. А. Манандян, *О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времён*, Ереван, 1954. Վ. Աբրահամեան, *Արհեստները Հայաստանում IV-XIII դդ.* հտ. I, Երեւան, 1958:

2 ქრონიკები და სხვა მასალა საქართველოს ისტორიისა და მწერლობისა. შეკრებილი, ქრონოლოგიურად დაწყობილი და ახსნილი თ.ჟორდანიას მიერ. წ. II, ტფილისი, 1897, გვ. 43-49.

3 ქართული ისტორიული საბუთები IX-XIII სს. შეადგინეს და გამოსაცემად მოამზადეს თ. ენუქიძემ, ვ. სილოგავამ, ნ. შოშიაშვილმა, თბ., 1984, გვ. 39-44.

4 ქართ. ისტ. საბ., გვ. 40.

5 Ստուգաբանութիւնն ու գործածութեան յղումները տե՛ս Հր. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան, IV*, Երեւան, 1979, էջ 374:

6 Ստ. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան*, հտ. Դ, Երեւան 1945, էջ 375:

7 Հ. Վարդան Հացուցի, նշ. աշխ., էջ 56:

8 Անդ:

9 Յ. Քիւրտեան, նշվ. աշխ., էջ 17-18:

10 სულხან-საბა ორბელიანი, თხზულებანი, ტ. IV$_2$, თბ., გვ. 130. Հմմտ. Նորայր Ն. Բիւզանդացի, *Բառագիրք ստորին հայերէնի*, Ժնեւ, 2000, էջ 707:

11 ქრონიკები..., გვ. 45, შენ. 9.

12 Ստ. Մալխասեանց, նշ. աշխ.

13 ქრონიკები..., ტ. I, გვ. 45-46.

14 Н. Марр, *Исторический очерк груз. церкви...* - "Церковные Ведомости", 1907, N 3, стр. 138

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑՈՒ «ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ» ԵՐԿԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մոհամմադ Մալեք-Մոհամմադի

Քանի որ մինչ օրս Եզնիկի «Եղծ աղանդոց» երկի բառապաշարին բնորոշ մի շարք առանձնայատկութիւններ ամբողջական տեսքով չեն ներկայացուել, անհրաժեշտ համարեցինք տալ «Եղծ աղանդոց»-ում բնիկ եւ փոխառեալ բառերի իմաստային խմբերը, «Եղծ աղանդոց»-ում առաջին անգամ վկայուած բառերը, համանուանութեամբ առնչուող բառերը, ինչպէս նաեւ հոմանիշներն ու հականիշները:

«Եղծ աղանդոց»-ը պարունակում է 3588 բառ: Այս հաշուառման մէջ մտնում են բոլոր դարձուածքները, դերբայական ու դերանուանական տարբերակները ինչպէս նաեւ տեղանուններն ու անձնանունները: «Եղծ աղանդոց»-ում յատուկ անունների քանակն է 49 [Առաքելեան Վ., 1975, էջ 41]: «Եղծ աղանդոց»-ի համաբարբառում տեղ գտած բառարանային բառերի ընդհանուր քանակը՝ 3424, մէկ անգամ գործածուած բառերի ընդհանուր քանակը՝ 1630 [Համաբարբառ, 1972, էջ 838]:

«Եղծ աղանդոց»-ը հիմնականում գիտական քննախօսական ու չատագովական բնոյթ ունի: Նրա բովանդակութիւնը ընդգրկում է փիլիսոփայական, աստուածաբանական, բարոյագիտական, տիեզերագիտական, ինչպէս նաեւ բուսաբանական, կենդանական, բժշկագիտական, հոգեբանական, ազգագրական եւ ուրիշ շատ հարցեր:

«Եղծ աղանդոց»-ում ընդգրկուած ամբողջ բառամթերքը կազմում են բնիկ եւ փոխառեալ բառերը, որոնք մենք փորձել ենք առանձնացնել 20 իմաստային (թեմատիկ) խմբերի մէջ՝ ընդհանուր առմամբ տարբերակելով հետեւեալ կերպ.

1. Ֆիզիկական աշխարհ - արեգակն, արեւ, լուսին, աստղ, երկինք, ամպ, հողմ, անձրեւ, ցօղ, կարկուտ, ձիւն, լեառն, անտառ, անապատ, գետ, ծով, ջուր, գետին, հող, հուր, կրակ, օդ:

2. Ժամանակ - ամ, դար, ամիս, ժամ, ժամանակ, օր, տարի, անագան, վաղ, վաղիւն, առաւօտ, ցերեկ, գիշեր, ցայգ, գարուն, աշուն, ձմեռն, շաբաթ, նոր, հին, ծեր, երբեմն, կանուխ, հազիւ, ստէպ:

3. Երկրագործութիւն, բուսականութիւն - գարի, կորեակ, հաճար, ցորեան, որոմն, փայտ, ծառ, արմատ, անդ, այգի, դաշտ, մորի «անտառ», մայրի «անտառ», սերմն, պտուղ, տունկ, դեղ «բոյս», գերանդի, մանգաղ, ձիթենի, մորենի, որթ, բանջար, խոտ, մանրագոր, հազար, կանեփուկ, մոլախինտ, անդաստան, կաղանչանն:

4. Կենդանիներ - գազան, առիւծ, արջ, վարազ, արջառ, ցուլ, շուն, կորիւն «ձագ», գայլ, թոժիւն «արջի ձագ», անասուն, օձ, կարիճ, թռչուն, սողուն, կով, ծովացուլ, վիշապ, նհանգ, գրաստ, կէտ, դելփին, ձուկն, ճճի, փոկ, ջորի, ուղտ, եըէ – էրէ, եզն, բասիլիսկոս, էշ, մաքի, աղուէս, ձի, գառն, ոչխար, սիրամարգ, փիղ, այծեամն, եղջերու, մուկն, ինձ, յովազ, խոյ, խորդ, ծիծեռն, մրջիւն, մեղու, իշավայրի, աւանակ, խոզ, երինջ, իժ, պիծակ, որդն, մուն, գոռեխ, մժեխ, ցեց, լու, քարբ, կապիկ, հաւ «թռչուն», ուլ:

5. Կրօն, նախապաշարմունք - աստուած, եկեղեցի, հաւատ, աղօթք, քարոզ, պահք, յաշտ, զոհ, խաչ, դժոխք, հեթանոս,

© National Library of Armenia